

Ն. Մ. ԳԵՐՄԱՆՅԱՆ

## ԱԶՆԻՎ ՎԱՐԴԵՐԻ ԱԶՔԱՊԱՏՎԱՍՏԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ձեռնարկելով Երևանի Բուսաբանական այգում աղյուլ վարդերի բազմամյա աշխատանքները, մենք տվյալներ չունենինք նրանց պատվաստման լավագույն ժամկետների մասին:

Սկսած 1958 թվականից տվյալներ հավաքեցինք այգում կատարած մասսայական պատվաստների վերաբերյալ, ինչպես նաև այդ ուղղությամբ կատարեցինք փորձեր:

1958—1959 թվականի ամռանը Միտիլյան զանազան քաղաքներից ստացվեցին վարդի տարբեր սորտերի կտրոններ, որոնց աչքերով պատվաստեցինք մասերնու 2 տարեկան պատվաստակալներ: Հաջորդ գարնանը կատարվեց հաշվառում, որի տվյալները բերված են № 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

| Որտեղից է ստացված կտրոնը | Պատվաստման ժամկետը | Պատվաստված թվերի քանակը | Պատվաստված աչքերի քանակը | Բացված աչքերի քանակը | Աչքերի կալոցողական նուրբյալի տոկոսը |
|--------------------------|--------------------|-------------------------|--------------------------|----------------------|-------------------------------------|
| Մոսկվա                   | 29.8.58 թ.         | 221                     | 311                      | 39                   | 13,0                                |
| Յալտա                    | 24.8.58 թ.         | 179                     | 459                      | 87                   | 18,9                                |
| Թբիլիսի                  | 22.7.59 թ.         | 51                      | 190                      | 43                   | 27,6                                |
| Մոսկվա                   | 26.8.59 թ.         | 79                      | 310                      | 43                   | 13,9                                |
| Յալտա                    | 27.8.59 թ.         | 540                     | 1397                     | 191                  | 13,6                                |
| Օդեսա                    | 29.7.59 թ.         | 152                     | 223                      | 48                   | 21,5                                |

Աղյուսակից երևում է, որ անկախ կտրոնների ներմուծման վայրից պատվաստի կալոցողականությունը տոկոսը շատ ցածր է:

Այսպիսի անհաջողության հիմնական պատճառը մեր կարծիքով պատվաստի ժամանակի ուշ լինելն է. դա երևում է թեկուզ հենց նրանից, որ Թբիլիսիից բերված կտրոնները, որոնք պատվաստվել են մեկ ամիս շուտ, մոտ երկու անգամ ավելի կալոցողականություն են տվել:

Ելնելով վերոհիշյալից մենք որոշեցինք գտնել վարդերի պատվաստի ճիշտ ժամկետ Երևանի Բուսաբանական այգու պայմաններում:

Փորձերը դրվել են 1960 թ. այգում եղած 6 սորտերի վրա, որոնք 3 ժամկետով պատվաստեցինք մասերենիների վրա: Ստացված տվյալները բերված են № 2 աղյուսակում:

Պարզ երևում է, որ ամենից լավ ժամկետը հուլիսի 10-ից 25-ն է, որի ժամանակ պատվաստի միջին կալոցողականությունը կազմել է 83,8 տոկոս: Դիտողությունները ցույց տվեցին, որ պատվաստի վաղ ժամկետը բարերար ազդեցություն է թողնում նաև պատվաստված աչքից առաջացած շվի աճման ու փայտացման աստիճանի վրա:



| Սորտի անունը               | Պատվաստի ժամկետները      |                      |                   |                          |                      |                   |                          |                      |                   |
|----------------------------|--------------------------|----------------------|-------------------|--------------------------|----------------------|-------------------|--------------------------|----------------------|-------------------|
|                            | 1—10 հուլիսի             |                      |                   | 10—25 հուլիսի            |                      |                   | 1—15 օգոստոսի            |                      |                   |
|                            | Պատվաստված աչքերի քանակը | Բացված աչքերի քանակը | Կոչողականությունը | Պատվաստված աչքերի քանակը | Բացված աչքերի քանակը | Կոչողականությունը | Պատվաստված աչքերի քանակը | Բացված աչքերի քանակը | Կոչողականությունը |
| Ֆրաու կարլ Դրուժկի         | 38                       | 28                   | 73,6              | 40                       | 36                   | 90                | 38                       | 25                   | 65,7              |
| Ջոն Լայն                   | 25                       | 18                   | 72                | 22                       | 19                   | 86,3              | 20                       | 13                   | 65                |
| Նյու-Դիկսոն                | 20                       | 14                   | 70                | 20                       | 17                   | 85                | 18                       | 9                    | 50                |
| Հենրիխ Մյունխ              | 18                       | 12                   | 66,7              | 16                       | 13                   | 81,2              | 16                       | 9                    | 56,2              |
| Նեդլեյ Ռոդ                 | 10                       | 7                    | 70                | 8                        | 6                    | 74,9              | 7                        | 4                    | 57,1              |
| Կապիտան Նրիստ              | 11                       | 8                    | 72,7              | 7                        | 6                    | 85,7              | 7                        | 3                    | 42,8              |
| Միջինը բոլոր սորտերի համար | —                        | —                    | 71,9              | —                        | —                    | 83,8              | —                        | —                    | 56,8              |

Նույն տարվա հոկտեմբերի վերջին կատարվեց շվերի աճման հաշվառում, որի տվյալները բերված են № 3 աղյուսակում:

Դիտողությունները ցույց տվեցին հետևյալը՝

1. Հուլիսի սկզբում կատարված պատվաստը նույնպես բավականին թերություններ ունի:

ա) Աչքը լրիվ հասունացած չի լինում, որի պատճառով էլ երկար ժամանակ է պահանջվում մինչև նրա բացվելը:

բ) Ցանկացած քանակությամբ պատվաստացու չի լինում:

2. Օգոստոսի առաջին կեսին կատարված պատվաստի դեպքում աչքի բացվելը համընկնում է աշնան տաք և չոր օրերին և որոշ աչքեր մինչև համակենցվում են պատվաստակալի հետ չմշկվում, տուրգորից ընկնում են և ոչնչանում: Ստացված շվերի մի մասը չի փախտանում, որի պատճառով ձմեռը ցրտահարվում է, իսկ մի մասն էլ ծածկույթի տակ փրկում, ոչնչանում է:

1960 թվականի պատվաստից ստացված շվի անը ըստ պատվաստի ժամկետների

| Սորտի անունը       | Շվի միջին անը սանտիմետրերով |               |               |
|--------------------|-----------------------------|---------------|---------------|
|                    | Պատվաստի ժամկետները 1960 թ. |               |               |
|                    | 1—10 հուլիսի                | 10—25 հուլիսի | 1—15 օգոստոսի |
| Ֆրաու կարլ Դրուժկի | 31                          | 55            | 23            |
| Ջոն Լայն           | 35                          | 49            | 28            |
| Նյու-Դիկսոն        | 30                          | 41            | 19            |
| Հենրիխ Մյունխ      | 29                          | 39            | 17            |
| Նեդլեյ Ռոդ         | 33                          | 37            | 21            |
| Կապիտան Նրիստ      | 27                          | 27            | 25            |

Նշենելով վերոհիշյալից մենք գալիս ենք այն հզրակացութիւն, որ վարդերի աչքապատկասի ամենալավ ժամկետը Նրեանի բուսարանական արդու պայմաններում, դա հուլիսի երկրորդ կեսն է, որի դեպքում կաշտղականութիւնը բարձր է լինում, ստացված շվերն էլ 80—95 տոկոսով փախտանում են եւ լավ են ձմեռում:

Н. М. ГЕРМАНЫН

## О СРОКАХ ОКУЛИРОВКИ РОЗ В УСЛОВИЯХ ЕРЕВАНА

### Резюме

Опытами прививки шести сортов ремонтантных и чайно-гибридных роз, проведенными летом 1960 года в Ереванском ботаническом саду, показано, что лучшим сроком окулировки спящим глазком является вторая половина июля. Приживаемость глазков, привитых с 10 по 25 июля, составила в среднем для всех сортов 83,8%. Образующиеся побеги одревесневают почти полностью и выносят благополучно зимовку. Окулировки в более ранние (1—10.VII) и более поздние (1—15.VIII) сроки дали менее успешные результаты.



